

## ՀԱՆՈՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ

Սովետական տարիների ընթացքում մեր երկրի քաղաքներն ու ավանները արմատապես վերափոխվեցին, ստացան նոր դեմք, նոր կերպարանք: Հին բնակավայրերի թվին ավելացան բազմաթիվ նոր բնակավայրեր, սկսած փոքր ավաններից մինչև խոշոր արդյունաբերական և վարչական կենտրոններ մի քանի հարյուր հազարանոց ազգաբնակչությամբ:

Պետությունը աներևակայելի մեծ միջոցներ է ներդնում այդ քաղաքների ինչպես արդյունաբերական, այնպես էլ վարչատնտեսական, և հատկապես կոմունալ և բնակարանային շինարարության վրա:

Որոշ նորմատիվներում կապիտալ կառուցվածքների կյանքը սահմանվում է 40-ից 60-70 տարի, նկատի ունենալով, որ այդ ժամանակաընթացքում շինությունը կկրի ընթացիկ և հիմնական նորոգումներ: Մի քանի տարի առաջ հիմնական նորոգումները նկատի ունեին նորով փոխարինել շարքից շուտ դուրս եկող մասերը, ասենք՝ դուռ-պատուհանների փեղկերը ու շրջանակը, փայտե ծածկերն ու պատշգամբները, փայտե աստիճաններն ու ողջ տանիքը և այլն:

Երկրի տնտեսության հարաճուն վերելքը հնարավոր դարձրեց, որ վերջին 5-7 տարիների ընթացքում կառուցվածքի փայտային մասերը փոխարինվեն ավելի դիմացկուն երկաթբետոնե մասերով, դրանով իսկ ձգտելով, որ կառուցվածքի բոլոր մասերը ստանան նույն երկարակեցությունը և քիչ առիթներ ստեղծեն կապիտալ վերանորոգումների, դարձնեն ավելի հրակայուն և սեյսմակայուն: Ինչ խոսք, որ այս կարևոր միջոցառումը բարձրացրեց շինությունների կարգը և ավելի տևական՝ նրանց օգտագործումը: Մակայն մեր վերջին տարիների շինարարական պրակտիկան ցույց տվեց, որ որոշ դեպքերում, ասենք բնակելի, կոմունալ շենքեր նշաններ են ցույց տալիս ավելի կարճատև կյանքի: Դեպքեր են պատահում, որ կառուցվածքի շինարարությունը դեռ չավարտված, երևան են գալիս նրա քայքայման նշանները՝ պատերում ճեղքեր, հիմքի նստվածք, ծածկի կամ պատշգամբի փլվածք և այլն:

Ի՞նչի հետևանք են վերոհիշյալ դեպքերը: Անկասկած, որակի ցածր մակարդակի, շինարարության գործի հետ կապված մարդկային պատասխանատվության զգացմունքի բացակայության, անփութության և անուշադրության, որոշ դեպքերում նաև գործը չիմանալու հետևանք, շինարարությունը համապատասխան կադրերով չապահովելու հետևանք: Այստեղ չի բացառվում նաև վատորակ շինանյութերի գործադրումը:

Շինարարությունը մեր երկրում ամենակարևոր գործերից է և շատ մեծածավալ, այն վերցնում է ժողովրդական տնտեսության միջոցների զգալի մասը: Դրության բարելավումն այս ասպարեզում շատ խոշոր տնտեսական և նույնիսկ քաղաքական նշանակություն ունեցող հանգամանք է:

Օրինակ ինչու՞ շինությունը չպետք է ունենա այնքան կյանք, որքան նրա ատաղձը կազմող շինանյութը, ասենք՝ աղյուսը, քարը, երկաթբետոնը և այլն: Օրինակ, ինչու՞ շինությունը 50-ի փոխարեն չպետք է ունենա 200-500 և նույնիսկ հազար տարվա կյանք: Բայց չէ՞ որ մենք դրա օրինակներն ունենք: Ահավասիկ մեր պատմական կառուցումները, հուշարձանները, որոնք որոշ դեպքերում կանգուն են, թեպետ և ինքը՝ քարը քայքայման-հողմահարվելու նշաններ է ցույց տալիս:

Պետք է պատկերացնել, թե ինչ է նշանակում այս: Այս նշանակում է փաստորեն քաղաքները կառուցել վերջին հաշվով, ոչ թե 50-100 տարին մեկ անգամ, այլ մի քանի հարյուր տարին մեկ անգամ. այսինքն, ոչ թե մարդու մի կյանքի ընթացքում հազարավոր միլիարդներ ծախսել մեկ-երկու անգամ, այլ տասնյակ սերունդների ժամանակաընթացքում մեկ անգամ:

Ի՞նչ է հարկավոր այսպիսի մեծ նվաճման հասնելու համար: Հարկավոր է շինարարության մեջ առավելապես օգտագործել գիտության հսկա նվաճումները դիմացկուն շինանյութերի և շաղախների ստեղծման ասպարեզում և ամենակարևորը՝ նրանց գործադրման որակը շինարարության մեջ խիստ բարելավել:

Օրինակ, եթե ձեռքի աշխատանքի պայմաններում հնարավոր էր կառուցվածքը դնել ավելի քան հուսալի հիմքի վրա, ապա հիմա, երբ փորման աշխատանքներում գործում են մեծ արտադրողականության էքսկավատորներ, ինչու՞ չի կարելի այդ անել,

խուսափելով այնպիսի դեպքերից, երբ շենքը սկսում է քայքայվել վատ հիմք կամ հիմնահատակ ունենալու հետևանքով:

Քիմիայի ասպարեզում գիտությունը հասել է շատ մեծ բարձրության: Ինչու՞ շինարարներին նրանք չեն օգնում շատ ավելի լավ կապող շինանյութեր ստեղծելու գործում, քան նրանք՝ շինարարները կարողանում են սեփական միջոցներով. կարևորն այստեղ այդպիսի նյութի էժան և մասսայական ստացումն է. չէ՞ որ հիմա կան լավ ցեմենտներ, սակայն մասսայական գործադրման համար նրանք թանկ են և սակավաքանակ:

Ինչու՞ քիմիկոսները չեն օգնում դիմացկուն, բայց թափանցիկ նյութի ստեղծման գործում, որ շինարարները գործադրեն արագ հողմահարման ենթակա ֆելզիտային քարերը ծածկելուց, ասենք թեկուզ Երևանի կառավարական տան ցոկոլի քայքայումը դադարեցնելու համար: Չէ որ այդ քարերի փոխարինումը դիմացկուն քարատեսակներով ավելի թանկ արժեցող գործ է:

Կառուցվածքի երկարակեցությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ շինարարությունում լինի դիսցիպլինա շինարարական օրենքների պաշտպանության տեսակետից, որ շինարարությունը ձմեռվա պայմաններում տարվի ըստ համապատասխան կանոնների, մինչդեռ խախտումները պրակտիկայում շատ հաճախ են իրենց ցույց տալիս:

Անհրաժեշտ է, որ կառուցվածքը շահագործման հանձնել լրիվ ավարտված, մինչդեռ մեր քաղաքում շենքեր կան, որ անավարտ են մնացել 20-25 տարվա ընթացքում:

Անհրաժեշտ է, որ կառուցվածքները ուշադիր կերպով պաշտպանվեն փչացումներից, մինչդեռ մեր աչքի առաջ շենքերը փչանում են, ճեղքեր են տալիս, նստում են, իսկ տերերը սպասում են մինչև դեպքը հասնի կատաստրոֆիկ վիճակի՝ նոր ապա ձեռնարկվեն միջոցառումներ: Օրինակ, նոր կառավարական տունը շատ տեղերում փչանում է զանազան պատճառներով, իսկ կոմունալ բաժինը անտարբեր է: Էլ ի՞նչ կարելի է ասել շարքային շենքերի վիճակի մասին:

Շինությունների երկարակեցության ապահովումը պահանջում է մեծ և փոքր միջոցառումներ. այդ ուղղությամբ ամեն հնարավոր միջոցի իրականացումը ժողովրդատնտեսության համար կարևորագույն գործ է:

13/3/1958 SU